ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

29 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ, 2015 թ.

№ 11 (981)

Թերթի առաջին համարը լույս է տեսել1965 թ. մարտի 11-ին
Երկշաբաթաթերթ ● հրատարակման 50 -րդ տարի

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ

Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի հենակետային վարժարանում (ավագ դպրոցում) 2015-2016 ուսումնական տարին դիմավորեցին լիարժեք համալրված աշակերտական և ուսուցչական համակազմով:

Հումանիտար, մշակութային և ֆիզիկամաթեմատիկական հոսքերում սովորելու համար այս ուսումնական տարում վարժարան է դիմել 100 աշակերտ:

Մանկավարժական համալսարանի թիվ 57 հիմնական դպրոցում այս ուսումնական տարում առաջին դասարան է ընդունվել 36 աշակերտ: Առաջին անգամ դպրոցի շեմին ոտք դրած աշակերտների համար բացվել է երկու առաջին դասարան: Իսկ դպրոցում սովորող աշակերտների թիվը 210 է, որը գերազանցում է նախորդ տարիների թվաքանակը:

➢2

Մանկավարժական համալսարանի ռեկտոր Ռուբեն Միրզախանյանը հանդիպեց «Ամառային դպրոց 2015» ծրագրի մասնակիցների հետ՝ համատեղ քննարկելու ծրագրի արդյունքները, դրա վերաբերյալ մասնակիցների դիտարկումներն ու առաջարկները:

Ռուբեն Միրզախանյանը նկատեց, որ Մանկավարժական համալսարանի արտասահմանյան գործընկերները գոհ են եղել բուհի ուսանողների մասնակցությունից: Ռեկտորը նշեց, որ նման ծրագրերին մասնակցությունը ուսանողներին պետք է նոր լիցքեր հաղորդի ուսումնական նոր տարում:

Հանդիպում «Ամառային դպրոց 2015» ծրագրի մասնակիցների հետ

«Բուհը հետապնդում է բազում նպատակներ և ծրագրեր, պետք է ձգտենք դրանք իրականացնել՝ պահպանելով մեր ազգային պատկանելությունը, հնարավորինս օգտակար լինենք հայրենիքին և հայրենի կրթական համակարգում ամրագրենք նոր ձեռքբերումներ»,- ասաց Ռուբեն Միրզախանյանը և հավելեց, որ կրթական համակարգի զարգացումները ենթադրում են կրթություն ստանալ նաև դրսում, սակայն հույս հայտնեց, որ դրսում ստացած գիտելիքները կնպաստեն ազգային խնդիրների լուծմանն ու պետության զարգացմանը:

➢2

Կոնեկտիկուտի համալսարանի բարձրագույն պարգևը՝ ՀՊՄՀ ռեկտորին

Սեպտեմբերի 9-10-ը Հարավային Կոնեկտիկուտի պետական համալսարանի նախագահ Մարի Փափազյանի հրավերով ԱՄՆ-ում էր Մանկավարժական համալսարանի ռեկտոր, պրոֆեսոր Ռուբեն Միրզախանյանը: ԱՄՆ կատարած այցի ընթացքում ՀՊՄՀ ռեկտորը հանդիպումներ ունեցավ նախագահ Մարի Փափազյանի, առաջին փոխռեկտոր Բետ Բերջերոնի, աշխատակազմի հաշվառման բաժնի (կադրերի բաժնի) վարիչ Ջեյ Բեյլի, ուսումնական գծով պրոռեկտորի պաշտոնակատար Այլին Քրոուֆորդի, առողջապահության և սոցիալական աշխատանքի ֆակուլտետի դեկան Սենդի Բալբրի, Միջազգային կրթական ծրագրերի բաժնի վարիչ Էրին Հայդքեմփի, արվեստի և հումանիտար գիտությունների ֆակուլտետի դեկան Սթիվ Բրիզի, մանկավարժության ֆակուլտետի դեկան Սթիվը Հյոգեդըշի, բիզնեսի ֆակուլտետի դեկան Էլլեն Դարնինի, ֆինանսական և վարչական գծով պրոռեկտոր Մարկ Ռոզևսկու հետ: Հանդիպումների ընթացքում ձեռք բերվեցին հետագա համագործակցության վերաբերյալ որոշակի պայմանավորվածություններ:

➢2

ՀՊՄՀ պատմության և իրավագիտության ֆակուլտետի ուսանողները և «100 լեռնագագաթ» լեռնագնացների ակումբի անդամները սեպտեմբերի 20-ին՝ ՀՀ անկախության օրվան ընդառաջ, բարձրացան ՀՀ ամենաբարձր լեռը՝ քառագագաթ Արագածը: Ուսանողներին ուղեկցում էին պատմության և իրավագիտության ֆակուլտետի դեկան է. Հովհաննիսյանը և հայոց պատմության ամբիոնի դասախոս Խ. Ստեփանյանը: Լեռնագնացները նվաճեցին Արագածի չորս գագաթներից երկուսը՝ Հարավայինը և Արևմտյանը: Սկզբում բարձրացան Հարավային գագաթը, որն ամենացածրն է, ապա իր բարձրությամբ երկրորդ՝ Արևմտյան գագաթը(4080մ): Հասնելով գագաթին՝ ուսանողները միասնաբար երգեցին ՀՀ օրհներգը, ապա ազգային երգ ու պարի կատարմամբ վայելեցին իրենց նվաճումը:

Կոնեկտիկուտի համալսարանի բարձրագույն պարգևը՝ ՀՊՄՀ ռեկտորին

Ռուբեն Միրզախանյանը եղավ Հարավային Կոնեկտիկուտի պետական համալսարանում, շրջեց բուհի գրադարանում, սոցիալ-կենցաղային հաստատություններում, նորաստեղծ, գերժամանակակից լաբորատորիաներով հագեցած գիտության կենտրոնում. հենց այստեղ են ուսանողները հետազոտություններ իրականացնում ֆիզիկայի, քիմիայի, IT և նանոտեխնոլոգիաների ոլորտում՝ բնական միջավայրի ուսումնասիրման և պահպանման ուղղությամբ:

Սեպտեմբերի 10-ին մեծ հանդիսավորությամբ Հարավային Կոնեկտիկուտի պետական համալսարանի նախագահ Մարի Փափազյանը ՀՊՄՀ ռեկտորին հանձնեց բուհի բարձրագույն պարգևը՝ նշելով, որ 3.5 տարվա իր նախագահության ընթացքում այս պարգևին արժանացնելու առաջին դեպքն է:

Մարի Փափազյանն ընդգծեց, որ պարգևը պրոֆեսոր Ռուբեն Միրզախանյանին շնորհվում է կրթական համակարգի զարգացման գործում ներդրած մեծագույն ավանդի, երկու համալսարանների հարաբերությունների զարգացման, ինչպես նաև բացառիկ ծառայությունների դիմաց:

Ռուբեն Միրզախանյանը շնորհակալություն հայտնեց բարձր պատվի արժանացնելու և գնահատանքի համար, ապա ՀՊՄՀ-ի կողմից բուհին հանձնեց գեղարվեստական կրթության ֆակուլտետի պրոֆեսոր Անուշ Եղիազարյանի գոբելեն աշխատանքը:

Նշենք, որ սեպտեմբերի 12-ին Նյու Յորքում էդ և Կարմեն Գյուլբենկյանների առանձնատանն, ի պատիվ Հայաստանի Թեքեյան մշակութային միության նախագահ, ՀՊՄՀ ռեկտոր Ռուբեն Միրզախանյանի, կազմակերպվել էր ընդունելություն, որին ներկա էին և ելույթ ունեցան Հայ Առաքելական եկեղեցու արևելյան թեմի առաջնորդ Խաժակ արքեպիսկոպոս Պարսամյանը, ՄԱԿ-ում Հայաստանի մշտական

Southern Connecticut State University

President's Medal of Honor

Dr. Ruben Mirzakhanyan

ներկայացուցիչ, դեսպան Զոհրաբ Մնացականյանը, Հարավային Կոնեկտիկուտի պետական համալսարանի նախագահ Մարի Փափազյանը, Նյու Յորքի և Նյու Ջերսիի Թեքեյան մշակութային միության նախագահ Հակոբ Վարդիվառյանը:

Ընդունելությանը ներկա էին Նյու Յորքի հայ համայնքի բազմաթիվ այլ ներկայացուցիչներ:

Մանկավարժական համալսարանի վարժարանի (ավագ դպրոց) և թիվ 57 հիմնական դպրոցի բակը սեպտեմբերյան աշխույժով էր լցվել. հուզմունքը և ուրախությունը միախառնվել էին, դարձել սպասում գիտելիքների ձեռքբերման ճանապարհին:

Նոր ուսումնական տարին՝ դասավանդման նոր մեթոդով

Մանկավարժական համալսարանի ռեկտոր Ռուբեն Միրզախանյանը նոր ուսումնական տարվա մեկնարկին ընդառաջ հանդիպեց համալսարանի պրոֆեսորադասախոսական հետ: Նա ներկաներին շնորհավորեց բոլորին այդ կապակցությամբ և մաղթեց արդյունավետ աշխատանք գիտական, ստեղծագործական գործունեության մեջ և անձնական կյանքում:

Ռեկտորը խոսեց կրթության ոլորտում առկա ժամանակակից մարտահրավերների մասին: «Կրթական համակարգում մենք աշխատում ենք բավականին լուրջ մրցակցային պայմաններում: Ելնելով դրանից՝ անհրաժեշտ է դասավանդման գործընթացում ներմուծել որոշակի նոր մեթոդներ և որակ»,- նկատեց Ռուբեն Միրզախանյանը՝ հավելելով, որ դասախոսություններն ավանդական թղթային տարբերակից վերածվելու են էլեկտրոնայինի:

Այսուհետև Մանկավարժական համալսարանի բակալավրիատի առաջին կուրսի ուսանողները, դասախոսությունից օրեր առաջ, էլեկտրոնային փոստերի միջոցով կստանան տվյալ դասախոսության թեմայի էլեկտրոնային տարբերակը: Մինչ այդ թեման պետք է հաստատվի համապատասխան ամբիոնի կողմից: Ռեկտորը նշեց նաև, որ դասախոսությունները պետք է իրականացվեն ինտերակտիվ ձևով, տեխնիկապես գերհագեցած լսարաններում: Ռուբեն Միրզախանյանը դասավանդման այս ձևաչափը նորություն չհամարեց, քանզի բոլոր միջազգային համալսարաններում առաջնորդվում են այդ սկզբունքով:

«Որպես ուսումնական հաստատություն մրցակցային դաշտում մնալու համար պետք է առաջնորդվել վերոհիշյալ պահանջներով, հակառակ պարագայում, տարիներ հետո կունենանք որոշակի խնդիրներ: Կրթական պրակտիկան ապացուցել է, որ նման դասավանդման ձևն առաջադեմ է և արդյունավետ»,- ընդգծեց ռեկտորը և հույս հայտնեց, որ դասախոսական կազմի մեծամասնությունը կհաղթահարի այս աշխատատար ու բարդ խնդիրը:

Ռեկտորն անդրադարձավ նաև նոր ուսումնական տարվա ընդունելության թվաքանակին՝ նկատելով, որ այն անցյալ տարվա համեմատությամբ էական փոփոխության չի ենթարկվել: Խոսելով մագիստրոսական կրթության մասին՝ ռեկտորը նշեց, որ մագիստրոսական կրթության հանդեպ հետաքրքրությունը մեծանում է, իսկ մագիստրատուրա դիմողների մի մասն էլ այլ բարձրագույն ուսումնական հաստատություններից է: Մագիստրոսական թեզերին անդրադառնալով՝ ռեկտորը հորդորեց ներկաներին ավելի խստապահանջ լինել թեմաների հաստատման հարցում և մեծ ուշադրություն դարձնել մագիստրոսական թեզեր գրող ուսանողների ինքնուրույնությանը:

Հանդիպման ավարտին դասախոսներն ուղղեցին իրենց հուզող հարցերը և ներկայացրին տարբեր առաջարկներ:

Սոնա ԱՐԱՄՅԱՆ

➢1 Ռեկտորն ուսանողներին հորդորեց ներկայացնել նաև ծրագրին վերաբերող դիտարկումներ և առաջարկներ՝ հաջորդ տարիներին դրանք շտկելու համար, ինչպես նաև ուսանողներին կոչ արեց իրենց կուրսընկերների հետ կիսել տպավորությունները, շահագրգռել նրանց՝ օտար լեզու սովորել՝ հետագայում ամառային դպրոցներին մասնակցելու համար:

Լիտվա, Ֆինլանդիա, Մոսկվա, Սանկտ Պետերբուրգ և Բելառուս մեկնած ուսանողները, շնորհակալություն հայտնելով համալսարանի ղեկավարությանը նման հնարավորություն ընձեռելու համար, նկատեցին, որ ծրագրը հագեցած էր ինչպես ճանաչողական, այնպես էլ կրթական բովանդակությամբ: Ուսանողները նշեցին, որ դա լավագույն հնարավորությունն էր ծանոթանալու տարբեր մշակույթների, ազգերի ներկայացուցիչների հետ, ձեռք բերելու նոր ընկերներ և վառ տպավորություններ, որոնք ողջ կյանքի ընթացքում ուղեկցելու են իրենց:

Սանկտ Պետերբուրգ մեկնած ուսանողներին ուղեկցած Մանկավարժական համալսարանի դասախոս Ռուզաննա Հախումյանը բոլոր ուսանողների անունից շնորհակալություն հայտնեց կազմակերպիչներին և նշեց, որ ուսանողների աչքերում նկատելի ուրախություն կար, լեզվական նոր միջավայրում գտնվելը նրանց համար հիանալի առիթ էր: Դասախոսն առաջարկեց նաև ծրագրի շրջանակում ուշադրություն դարձնել ոչ միայն ճանաչողական, այլև կրթական բաղադրիչին:

Նախորդ տարի Աղավնաձոր, իսկ այս տարի արտերկրի տարբեր համալսարաններ մեկնած ուսանողներն էլ վստահեցրին՝ հայաստանյան ամառային դպրոցը եթե չի գերազանցում, ապա ոչ մի բանով չի զիջում նրանց կազմակերպածին:

Ամփոփելով իրենց տպավորությունները՝ ուսանողները վստահեցրին՝ «Ամառային դպրոց 2015-ը» իրենց տվեց մի կարևոր պատգամ. մարդիկ բաժանվում են ոչ թե ըստ ազգությունների, այլ՝ բարու և չարի:

Բելառուս մեկնած ուսանողներն էլ Մանկավարժական համալսարանի ռեկտոր Ռուբեն Միրզախանյանին հանձնեցին Մաքսիմ Տանկի անվան պետական մանկավարժական համալսարանի ռեկտոր Ալեքսանդր Ժուկի շնորհակալական նամակն ու հուշանվերը:

Սոնա ԱՐԱՄՅԱՆ

Մանկավարժական համալսարանի պատմության և իրավագիտության ֆակուլտետի դեկան Էդգար Հովհաննիսյանը կարևորում է օտարերկրյա հայագետների հանդիպումները ապագա պատմաբանների հետ: Այս անգամ պատմաբանների հյուրը ճապոնացի հայագետ Տակայուկի Յոշիմուրան էր, ով Հայաստանում է գտնվում Հայաստանի ազգային արխիվում հայոց պատմության շուրջ ուսումնասիրությունների նպատակով: Ճապոնացի հայագետը շնորհակալ գործ է անում և նրա ուշադրության կենտրոնում 20-րդ դարի Հայաստանի պատմական իրադարձություններն են:

Տակայուկի Յոշիմուրան ճապոնիայի Վասեդայի համալսարանի դասախոս է, իսկ հայ ուսանողների առաջ առաջին անգամ էր հանդես գալիս դասախոսությամբ: Նա նկատելի հուզմունքով դասախոսությունն սկսելուց առաջ դեկանին և ուսանողներին ողջունեց հայերենով, ապա անգլերեն լեզվով ներկայացրեց մասնավորապես առաջին աշխարհամարտի տարիներին հայ-ճապոնական հարաբերություններին վերաբերող իր դասախոսությունը:

ԹԱՆԳԱՐԱՆԸ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆՆ Է

Մանկավարժական համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողների հյուրն էր ռադիոինժեներ, տնտեսագիտության թեկնածու, գործարար և բարերար Ռուբեն Ցոլակի Գրիգորյանը: Նա ավարտել է Երևանի Պոլիտեխնիկական ինստիտուտը և շուրջ 30 տարի է ապրում է Մոսկվայում:

Ռ. Գրիգորյանի երկրորդ այցը Մանկավարժական համալսարան առանձնացավ հետաքրքիր և ուսանելի դասախոսությամբ, որը յուրահատուկ մարդասիրական կոչ էր՝ ուղղված մեր ժամանակի մարդկանց, հասարակության տարբեր շերտերին, և, մասնավորապես ապահով խավին՝ ֆինանսական միջոցները մարդկության շահերին ծառայեցնելու, սեփական շահը ազգային շահից վեր չդասելու հատուկ շեշտադրումով:

Դասախոսության առաջին՝ «Մոսկվայի հայկական թանգարանն ու ազգի մշակույթը» մասը նվիրված էր Մոսկվայում իր կողմից բացված հրաշալի թանգարանին, որը Հայոց ցեղասպանության 100-ամյակը հանրահռչակող և անցյալի պատմության սխալները մատնանշող իսկական կոթող է, վայր, որտեղից այցելուները հեռանում են իրազեկված, դասեր քաղած, աշխարհի իրադարձությունների ու իրականության հանդեպ վերափոխված ընկալումներով ու մոտեցումներով:

Մոսկվայի «Օլիմպիյսկի» պողոտայի թիվ 9 հասցեում է գտնվում 20-րդ դարի առաջին Ցեղասպանությանը նվիրված թանգարանը, հայկական եկեղեցուն հարող տարածքում: 11 բաժիններում ցուցադրվող նմուշները ավելի քան խոսուն են, վերնագրերը՝ նույնպես: Մեծ բարեգործի ջանքերով ու նյութական միջոցներով ստեղծված հիանալի թանգարանում այցելուներին սպասում է 3D կինոթատրոնը, հայկական Սփյուռքը ներկացնող յուրահատուկ վիզուալ գլոբուսը, «Լինել հայ», «Դիմանկարներ», «Ինտերակտիվ» գիրք, «Երաժշտական գրադարան», «Դանթեական», «Պատկերասրահ» և այլ բաժիններ:

Դասախոսության երկրորդ մասը բանախոսի՝ կյանքի իրական ու փիլիսոփայական ընկալման արտահայտումն էր, բանախոսի պարզ ու ճշմարտացի հայացքը՝ ուղղված անցյալին, ներկային ու ապագային՝ «Ինչպես եմ տեսնում շրջակա աշխարհը» վերնագրով:

Այդպիսին պետք է լինի մարդը՝ անկախ սոցիալական դիրքից ու կարգավիճակից, քանզի մարդու երկրային կյանքը կարճ է, և յուրաքանչյուրի բարի գործով է մեծապես պայմանավորված այս երկիր մոլորակի ամեն պտույտն ու ընթացքը:

Մոսկվայաբնակ բարեգործը խոսեց նաև իր կողմից ստեղծված ինտելեկտուալ ակումբի մասին և կոչ արեց Fasebook սոցիալական ցանցի միջոցով դառնալ ակումբի անդամ և հանդես գալ հետաքրքիր գաղափարներով: Պետք է ազնիվ լինել սեփական ազգի և մյուսների հանդեպ, պետք է յուրաքանչյուրն իր մասով մասնակցի աշխարհի գլոբալ փոփոխություններին և կարողանա մի լավ գործ անել: Սա էր հյուրի հավատամքը, որ ներկայացրեց համեստ ու զուսպ կեցվածքով՝ անկեղծ ու անմիջական կապ հաստատելով մանկավարժական լսարանի հետ:

Հանդիպումն ամփոփվեց ՀՊՄՀ ռեկտորի խոսքով. բուհի ղեկավարը ներկաների անունից շնորհակալություն հայտնեց Ռուբեն Գրիգորյանին՝ հայ ազգին մատուցած մեծագույն ծառայության համար, և նրան պարգևատրեց «Մանկավարժական համալսարան» մեդալով: Ռուբեն Միրզախանյանը վստահեցրեց, որ Հայաստանի սահմաններից դուրս այդ բացառիկ ու պրոֆեսիոնալ թանգարանն իր նախադեպը չունի:

«Թանգարանը հիշողություն է, որը պետք է պահպանել անցյալի սխալները չկրկնելու համար», -շեշտեց Ռուբեն Գրիգորյանը,- «կատարվածի կարորությունը ոչ ոք չի հասկանա, եթե դրա մասին չգիտի»: Նա համոզված է՝ եթե թանգարանը կարողանա թեկուզ մի քանի մարդու փոխել, վերածնել՝ նշանակում է իր գործը հաջողությամբ է պսակվել:

Ահռելի ներդրման հիմքում մարդկությանը ինքնասպան պատերազմներից ու ցեղասպանությունից ետ պահելու մարդասիրական գաղափարն է, որ հայազգի Ռուբեն Գրիգորյանին թույլ է տվել իր ֆինանսական միջոցները բարի գործի վերածել՝ քաղաքակրթությունը ոչնչացումից փրկելու՝ մարդկությանն ուղղված ևս մեկ արդարամիտ կոչ: Որպեսզի երբեք և ոչ ոք չհամարձակվի ասել. «Իսկ ո՞վ է հիմա հիշում հայերի և այլ ժողովուրդների ցեղասպանության մասին...»:

Միլվա ԱՍՐՅԱՆ

Բուհերի միջազգայնացմանն ուղղված քայլ

Մանկավարժական համալսարանում կայացավ «Բարձրագույն ուսումնական հաստատությունների միջազգայնացում. հնարավորություններ և գործիքներ» խորագրով աշխատաժողովը:

Բարձրագույն կրթության բարեփոխումների փորձագետ Սամվել Կարաբեկյանը ողջունեց աշխատաժողովի մասնակիցներին և նկատեց, որ փորձագետները իրենց մանդատների շրջանակում մասնակցում են բարձրագույն կրթության բարեփոխումների ամենաարդիական խնդիրներին նվիրված բազամատեսակ միջոցառումների, իսկ հետո այդ ոլորտի մասնագետների հետ նրանք սովորաբար կիսում են իրենց ձեռք բերած տեղեկատվությունն ու քննարկում ներբուհական համակարգում համապատասխան ոլորտի խնդիրների ներկայիս վիճակն ու հեռանկարները: Փորձագետը հույս հայտնեց, որ քննարկման արդյունքում բացի տեղեկատվության փոխանցումից, կլինեն նաև առաջարկներ և լուծումներ քննարկվող խնդիրների վերաբերյալ:

Հայաստանում ազգային «Էրազմուս Պլյուս» գրասենյակի համակարգող Լանա Կառլովան ուրախությամբ նկատեց, որ վերջին տարիներին համալսարաններում քննարկվում և լուրջ քայլեր են արվում միջազգայնացման վերաբերյալ, քանզի այդ գործում մեծ կարևորություն ունեն հնարավորությունների և անհրաժեշտ գործիքների վերաբերյալ նման քննարկումները:

«2006 թվականից սկիզբ առած միջազգայնացմանն ուղղված քայլերը միտված են շարժունությանը. փոխվում է բուհերի ռազմավարությունը, ուսումնական ծրագրերը, ուսանողների և աշխատողների հանդեպ պահանջները, սակայն առաջին հերթին պետք է հասկանալ շարժունության արժեքը. փոխել միջավայրը, բաց լինելու համար բոլոր մեխանիզմներով՝ ծրագրերի համադրելիություն, գործիքների կիրառում և այլն»:

Մանկավարժական համալսարանի Միջազգային համագործակցության բաժնի ղեկավար, բարձրագույն կրթության բարեփոխումների փորձագետ Քրիստինա Ծատուրյանը որպես փորձագետ իր հետազոտություններն անցկացրել է Բելգիայի Գենտի համալսարանում: Խոսելով միջազգայնացման ուղղությամբ ՀՀ բուհերի կարիքների ու խնդիրների մասին՝ Ք. Ծատուրյանը նշեց. «Որպես Բոլոնյայի գործընթացի անդամ և եվրոպական բարձրագույն կրթական տարածաշրջան՝ մեր երկիրը, մարտահրավերների առաջ է կանգնած: Հետևաբար, մեր կամքից անկախ, մրցակցային պայմաններում մենք էլ ենք կանգնում միջազգայնացման գործընթացի առջև: Այս աշխատաժողովը նպատակ ունի մի հարկի տակ հավաքել տարբեր ուսումնական հաստատությունների միջազգային հարցերով զբաղվողներին և համատեղ քննարկել միջազգայնացման խնդիրներն ու հեռանկարները, միմյանց փոխանցել ձեռք բերած գիտելիքները, ինչպես նաև նպաստել դրանց տարածմանը»:

Խոսելով ՀՊՄՀ -ի միջազգայնացմանն ուղղված քայլերի մասին՝ Քրիստինա Ծատուրյանն այն դիտարկեց որպես հաջողված փորձ: Փորձագետը նկատեց, որ Մանկավարժական համալսարանը 2011 թվականից մինչև օրս նկատելի աճ է գրանցել, որը պայմանավորված է համալսարանի ղեկավարության նախաձեռնողական քաղաքականությամբ:

Միջազգայնացմանը խոչընդոտող խնդիրներն, ըստ փորձագետի, մեր երկրի աշխարհագրական դիրքով է պայմանավորված և օտար լեզվի չիմացությամբ:

Մյուս փորձագետները ևս ներկայացրին արտասահմանյան այլ երկրների խոշոր բուհերում իրականացված ուսումնասիրությունների արդյունքները՝ փոխանակման ծրագրեր, միջազգայնացման հայեցակարգային մոտեցումներ, հնարավորություններ, կրեդիտային շարժունություն և այլն:

Աշխատաժողովի ընթացքում զեկուցումներով հանդես եկան նաև ծրագրի մասնակից ուսանողները՝ ներկայացնելով կրեդիտային շարժունության ընթացքում առաջացած իրենց խնդիրները:

Աշխատաժողովին մասնակցում էին Երևանի և մարզերի բուհերի միջազգային կառույցների ներկայացուցիչները, Էրազմուս+ ծրագրի ներկայացուցիչ-փորձագետները:

Սոնա ԱՐԱՄՅԱՆ

ԳՐԱԿԱՆ ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐԻՑ ԴԵՊԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՄԲՈՂՋԱՑՈՒՄ

(դոցենտ Յուրի Հովհաննիսյանի 75-ամյակի առթիվ)

Լրացավ գրականագետ, բանասեր, մանկավարժական մայր բուհում երկարամյա գիտամեթոդական փորձառություն անցած Յուրի Գրիգորի Հովհաննիսյանի ծննդյան 75-ամյակը: Ինչպես իր սերնդից շատերին, նրան նույնպես ձգեց «լուսավորության կենտրոն» մոգական Երևանը, ուր եկավ Արցախի հեռավոր Հաղորտի գյուղից 1959-ին՝ ավարտելով ծննդավայրի միջնակարգ դպրոցը: Նա բախեց Պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի դռները, իսկ արդեն 1967-ից մտավ Խ. Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի հայոց լեզվի և գրականության բաժինը՝ այս անգամ յուրացնելու ուսուցչության գաղտնիքների անհատնում աշխարհը, մեկընդմիշտ կապվելով կրթության շարունակական զարգացումներին:

1976 թ. Յու. Հովհաննիսյանը պաշտպանել է «Ազատ Վշտունու կյանքը և ստեղծագործությունը» թեկնածուական ատենախոսությունը, տարիների ընթացքում արժանացել է ուսանողության և գործընկերների անսակարկ համակրանքին, սիրուն:



Նա նվիրումով է կարդացել գրականության պատմության տարբեր շրջանները՝ ժողովրդական բանահյուսությունից մինչեւ նորագույն ժամանակներ: Եվ ինչ էլ դասավանդել է, երիտասարդությանը կողմնորոշել է դեպի գեղեցիկի աշխարհ, դեպի ազգայինի ու գեղարվեստական մեկնությունների աղբյուրագիտական խորքերը՝ հաճախ հարստացնելով նյութերը արժեքային նորոգ զուգահեռներով: Յու. Հովհաննիսյանը գիտամանկավարժական՝ իրեն տրված վերընթաց փորձառությունն անցել է՝ սկսած ամենանախնական, պարզ քայլերից մինչև դոցենտի պաշտոն հայ գրականության ամբիոնում:

Սիրում է կրկնել հնուց եկող այն միտքը, թե ինքը գրականությունը յուրացրել է մանրամասների ճանապարհով: Ճի՛շտ է, միայն մեկ անհրաժեշտ հավելումով՝ երբեք չընկնելով մանրաթեմայնության գիրկը: Դա վերաբերում է մեկ բանաստեղծության խորքային բացահայտման ջանքին, որևէ գրողի կյանքի մեկ առերևույթ աննշան թվացող դրվագին: Նրա համար կենսական խորհուրդ ունի Ստ. Զորյանի հայտնի խոսքը, թե գրականության սաղարթները «բացվում են» մանրամասներից: Եվ այս ճանապարհով է քննել է Հովի. Հովհաննիսյանի, Վ. Տերյանի, Ա. Բակունցի, Դ. Դեմիրճյանի, Ա. Իսահակյանի, անցյալ դարի 20-30-ական թթ. գրական նվիրական այլ դեմքերի տիպական ուրվագծերը՝ հրապարակ նետելով շուրջ 100 գիտամեթոդական, ճանաչողական տարաբնույթ հոդվածներ: Այս դարասկզբին կազմել է համալսարանական կյանքից բխած մանրապատումների երեք ուշագրավ գրքեր, որոնց մեջ ամբողջացրել է ոչ միայն իր սուր տեսողությունը, մարդկային նկարագրերի մանրամասներ, այլ նաև բուհական կյանքը՝ «ափի մեջ»:

2012 թ. մանկավարժական համալսարանի 90-ամյակի մեդալով պարգևատրվելիս Յու. Հովհաննիսյանը ընդգծել է, որ համալսարանական ծառայությունը դիտել է կեցության իմացական բարձրագույն եղանակ, ուստի կարելի է հավարտ այս հպանցիկ նկարագրի՝ վերահաստատել՝ հոբելյարը այսօր էլ, վաստակած հանգստի անցած, քայլում է գրական ճանապարհներով, սիրված բանաստեղծի բնութագրությամբ՝ «սարն ի վեր»:

Հայ նորագույն գրականության և նրա դասավանդման ամբիոն

ՕԳՏԱԿԱՐ ՈՒՍՈՒՑՈՒՄ

Սեպտեմբերի 4-ին Հայաստանում նշում են ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակցի օրը: Պետք է նշել, որ նրանց մասնագիտական տոնն էլ յուրահատուկ է՝ ավելի շատ աշխատանքային, քան տոնական: ՏԿԱԻՆ աշխատակիցները հանդիպումներ են կազմակերպում տարբեր ուսումնական հաստատություններում՝ օրը առավել օգտակար ու արդյունավետ անցկացնելու նպատակով:

«Այսօր ՏԿԱԻՆ աշխատակցի օրն է, և համալսարանի առաջին բուժօգնության, քաղպաշտպանության և արտակարգ իրավիճակների ամբիոնը ՀՊՄՀ քաղպաշտպանության շտաբի և փրկարարական ջոկատի հետ միասին համալսարանի պատմության և իրավագիտության, գեղարվեստական կրթության և հատուկ կրթության ֆակուլտետների ուսանողների համար կազմակերպել է ուսուցում: Ձեռնարկի նպատակն է ուսանողներին ծանոթացնել արտակարգ իրավիճակներում փրկարարական անհետաձգելի աշխատանքների իրականացման համար օգտագործվող տեխնիկային»,-ասաց ամբիոնի վարիչ Հակոբ Գրիգորյանը:

Ինչպես տեղեկացանք ամբիոնի վարիչից, որոշակի սկզբունքով էր կատարվել տեղանքի ընտրությունը, որտեղ ուսանողներին ցուցադրվում էր արտակարգ իրավիճակներում աշխատանքներ իրականացնող փրկարարական տեխնիկան: Փողոցին հարակից համալսարանական գլխավոր մասնաշենքի բակից դուրս գալը կամարանցումով բավականին դժվար է, քանզի մանևրելու տեղ չկա, և անհրաժեշտ է, որ ուսանողները, դասախոսները իրազեկվեն ու կարողանան արտակարգ իրավիճակներում կատարել մարդկանց տարհանում: Բոլոր ֆակուլտետներում ստեղծվել են ուսանողական փրկարարական ջոկատներ, որոնք էլ արտակարգ իրավիճակների դեպքում ներգրավվելու են կազմակերպական աշխատանքներում:

Այնուհետև ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության փրկարարական ջոկատի հրամանատար լեյտենանտ Ահարոն Ղազարյանը և համալսարանի դասախոս Պերճ Կարապետյանը ուսանողների համար կազմակերպեցին հրշեջ տեխնիկայի և գույքի ցուցադրում, հանգամանորեն ներկայացրին, թե ինչ գործողություններ ու ֆունկցիաներ են իրականացվում վերջինիս միջոցով:

Ուսումնական հաստատություններում պարբերաբար անց է կացվում նման ցուցադրություն, իսկ Մանկավարժական համալսարանում ուսուցումն իր նախադեպը չուներ և ուսանողներին գործնականում շատ հետաքրքրեց

Սիլվա ԱՍՐՅԱՆ

Գերմանացի հոգեվերլուծողը հանդես եկավ դասախոսությամբ

Մանկավարժական համալսարանի կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի զարգացման և կիրառական հոգեբանության ամբիոնի նախաձեռնությամբ «Հոգեսոմատիկան հոգեվերլուծության մեջ (կլինիկական դեպքերի դրվագների ներկայացմամբ)» խորագրով դասախոսությամբ հանդես եկավ հայտնի գերմանացի գիտնական, հոգեբույժ, հոգեվերլուծող և հոգեթերապևտ, բժշկագիտության դոկտոր, Միջազգային հոգեվերլուծական ասոցիացիայի անդամ, պրոֆեսոր Հորսթ Կեխելեն:

Ներկաներին ողջունեց ֆակուլտետի դեկան Ռուզաննա Պետրոսյանը՝ ընդգծելով, որ ուսանողի համար չկա առավել կարևոր ու հետաքրքիր միջոցառում, քան կենդանի շփումը ոլորտի առաջատար մասնագետի և գիտնականի հետ:

Գիտնականը դասախոսությունը ներկայացրեց տեսական, և պրակտիկ տեսանկյունից, այուհետև ներկայացրեց կլինիկական դեպքեր սեփական փորձից: Կլինիկական դեպքերի դրվագների նկարագրության նպատակն էր հիմնավորել այն գաղափարը, որ դեղորայքային բուժում պահանջող հիվանդությունների բուժումն ավելի արդյունավետ է լինում հոգեվերլուծական հոգեթերապիայի հետ այն զուգակցելու դեպքում:

Դասախոսությունն ավարտվեց հարց ու պատասխանով: Հանդիպման ավարտին կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի դեկանը ֆակուլտետի անունից գիտնականին հանձնեց Հայաստանի պատմությունն ու մշակութային արժեքները խորհրդանշող հուշանվերներ:

Գիտնականը խոստացավ նաև հաջորդ այցելության ժամանակ հանդես գալ մեկշաբաթյա դասախոսությունների շարքով:

Դասվարները կդասավանդեն նաև շախմատ

Մանկավարժական համալսարանի սկզբնական կրթության ֆակուլտետի մանկավարժություն և մեթոդիկա (տարրական կրթություն) մասնագիտության 11 ուսանողներ Հայաստանի շախմատի ակադեմիայի վկայականներ ստացան, ինչը նրանց հնարավորություն կընձեռի երեք տարի դասավանդել «Շախմատ» առարկան ՀՀ հանրակրթական դպրոցներում: Ուսանողները մասնակցել են ինչպես ուսումնական պլանով նախատեսված շախմատի դասընթացներին, այնպես էլ ֆակուլտետային արտաժամյա պարապմունքներին:

Սկզբնական կրթության ֆակուլտետի դեկան Հեղինե Խաչատրյանը շնորհավորեց ուսանողներին այդ կապակցությամբ և ուրախությամբ նկատեց, որ ուսանողներից չորսն արդեն վկայականներ ստանալու հաջորդ օրն իսկ աշխատանքի են անցել դպրոցներում՝ համատեղելով ուսումն ու շախմատի դասավանդումը:

Ֆակուլտատիվ պարապմունքներն անցկացրած դասախոս Սամվել Միսակյանը նշեց, որ սա դասվարների համար երեխաների հետ աշխատելու ամենալավագույն տարբերակն է: Դասախոսն ուսանողներին խորհուրդ տվեց չվախենալ և նվիրվել շախմատին, իսկ ուսուցիչներին՝ յուրաքանչյուր օր ու ժամ աշխատել իրենց որակավորման բարձրացման ուղղությամբ:

«Այստեղ ստացած գիտելիքներս ինձ լիովին բավարարեցին, որպեսզի աշխատեմ շախմատի ուսուցիչ, ինքս շախմատիստի ընտանիքից եմ, համալսարան ընդունվելու օրվանից զբաղվել եմ շախմատով, մասնակցել եմ նաև այս դասընթացներին»,- ասաց բակալավրիատի 4-րդ կուրսի ուսանողուհի Վարդ Ղազարյանը: Ի դեպ, նա արդեն 6 ամիս է՝ աշխատում է Ապարանի շրջանի Շենավանի դպրոցում:

Սոնա ԱՐԱՄՅԱՆ

ՆՈՐ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Մանկավարժական համալսարանում էին Բեռնի համալսարանի պրոֆեսոր Հեյնո Մեսսենը, նույն բուհի պրոֆեսոր, Կայուն զարգացման և շրջակա միջավայրի կառավարման եվրոպական ծրագրերի կենտրոնի փոխտնօրեն Թոմաս Կոհլերը, Համաշխարհային աշխարհագրական միության լանդշաֆտային անալիզ և պլանավորում հանձնաժողովի նախագահ, Իվան Ջավախիշվիլու անվան Թբիլիսիի պետական համալսարանի Ռեգիոնալ աշխարհագրության և լանդշաֆտային պլանավորման ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Նոդար Էլիզաբարաշվիլին:

Լեռնային և կայուն զարգացման և ռեսուրսների կառավարման ծրագրի շրջանակներում Հայաստան ժամանած պատվիրակներին ՀՊՄՀ-ում ողջունեցին բուհի պրոռեկտորները, կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության ֆակուլտետի դեկանը, ամբիոնների վարիչները, վարչական ստորաբաժանումների ղեկավարները:

Կողմերը հանդիպման սկզբում միմյանց ներկայացրին իրենց կրթական հաստատությունները, վարած քաղաքականությունը, զարգացման հեռանկարները, ապա արտասահմանցի գործընկերները հանգամանորեն ներկայացրին «Լեռնային և կայուն զարգացման և ռեսուրսների կառավարում» ծրագիրը, Կովկասում լանդշաֆտների պլանավորման, կայուն զարգացման և ռեսուրսների կառավարման կարևորությունը:

Վերջիններս առաջարկեցին մանկավարժական բուհում ներդնել ծրագրին համանուն մագիստրոսական դասընթաց, հրապարակել դասագիրք, ինչպես նաև Բեռնի, Թբիլիսիի համալսարանների և ՀՊՄՀ-ի ուսանողների և գիտաշխատողների շրջանակներում իրականացնել փոխանակման ծրագիր:

Ի դեպ, մանկավարժական բուհում ծրագրի ներդրումը նորույթ է. մինչ ՀՊՄՀ-ի հետ համագործակցությունը, այն կրում էր սոսկ գիտահետազոտական բնույթ:

Համաշխարհային աշխարհագրական միության լանդշաֆտային անալիզի և պլանավորման հանձնաժողովի նախագահ Նոդար Էլիզաբարաշվիլին, մանրամասնելով ծրագրի արդիականությունը, ընդգծեց, որ այն կարևոր է ինչպես գիտապրակտիկ ոլորտի, այնպես էլ Կովկասում բնապահպանական, քաղաքական, տնտեսական մի շարք խնդիրների լուծման համար:

ՀՊՄՀ ներկայացուցիչները վստահեցրին, որ կձևավորվի փոխշահավետ համագործակցություն, իսկ օտարերկյա հյուրերն էլ հույս հայտնեցին, որ իրենց բուհերի անուններն առաջիկայում ևս տեղ կգտնեն բուհի միջազգային գործընկերների շարքում:

Արտասահմանցի հյուրերը Մանկավարժական համալսարանում նաև հանդես եկան դասախոսություններով:

Մարինե ԱՂԵԿՅԱՆ

Թանգարանային միջավայրում

Մանկավարժական համալսարանի թանգարանագիտության, գրադարանագիտության և մատենագիտության ամբիոնի դասախոս, մանկավարժական գիտությունների թեկնածու Դավիթ Պողոսյանը հուլիսի 27-ից սեպտեմբերի 4-ը Լոնդոնում և Գլազգոյում մասնակցել է Բրիտանական թանգարանի և գործընկեր թանգարանների կողմից կազմակերպված միջազգային վերապատրաստման ծրագրին: Հայաստանն այդ ծրագրին մասնակցում է երկրորդ անգամ ՀՊՄՀ դասախոս, Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի ծառայության գիտական խորհրդի անդամ և փորձագետ Դավիթ Պողոսյանի նախաձեռնությամբ:

Միջազգային վերապատրաստման ծրագիրն անցկացվում է արդեն տաս տարի և ենթադրում է տարբեր երկրներից հրավիրված մասնագետների մասնակցությամբ դասախոսություններ, սեմինարներ ու քննարկումներ, վարպետության դասեր, ցուցահանդես-նախագծերի կազմակերպում, բազմակողմանի մասնագիտական հմտությունների զարգացման ու փորձի փոխանակման արդյունավետ այլ գործունեություն հենց թանգարանային միջավայրում:

Այս տարի ծրագրին մասնակցել են ժառանգության ոլորտի 24 մասնագետներ, դասախոսներ Եգիպտոսից, Պաղեստինից, Հնդկաստանից, Իրանից, Հունաստանից, Թուրքիայից, Սաուդյան Արաբիայից, Սուդանից, Մալազիայից, Իրաքից, Տաջիկստանից, Պակիստանից, Չինաստանից:

Շատ կարևոր է, որ նման կարևոր մասնագիտական ծրագրին Հայաստանը ներկայացրել է մեր բուհի դասախոսը:

Մասնակցությանն աջակցել է ԻԿՕՄ-ի Հայաստանի ազգային կոմիտեն:

Ծրագրի ընթացքում Դ. Պողոսյանն ակտիվորեն ներգրավվել է քննարկումներին, Բրիտանական թանգարանի Միջին Արևելքի բաժնում և մյուս աշխատանքային տարածքներում ընդգրկվել իրականացվող փորձի փոխանակման աշխատանքներին, ներկայացրել ՀՀ պատմամշակութային ժառանգությունը և թանգարանային կադրերի պատրաստման աշխատանքները: Միաժամանակ նա այցելել է 30-ից ավելի թանգարաններ ու տեսարժան վայրեր Անգլիայում և Շոտլանդիայում, ներկայացրել առաջարկներ հայկական մշակութային ժառանգության ճիշտ ներկայացման վերաբերյալ, ինչպես նաև ձեռք է բերել մասնագիտական գրականություն, թվային նյութեր, տեսանյութեր, աշխատել տարբեր խմբերի և մասնագետների հետ:

Ծրագրի վերջում Դ. Պողոսյանը կատարած հետազոտության արդյունքում ներկայացրել է ցուցահանդես-առաջարկ՝ «Մեծամոր» պատմահնագիտական արգելոց-թանգարանում պահպանվող բաբելոնյան գորտակերպ կշռաքար-հմայիլի (16-րդ դ. Ք.Ա.) և Բրիտանական թանգարանի պահոցներում պահպանվող համանման արտեֆակտերի համադրման և նոր հետաքրքիր փաստերի բացահայտման տարբերակով:

Ծրագրին Հայաստանի մասնակցությունն արժանացել է դրական կարծիքների և հովանավորվել «Դրեզդենի պետական արվեստի հավաքածուներ» ժառանգության կենտրոնի կողմից, որի ներկայացուցիչ Դանա Կորզուսչեքը հատուկ Գերմանիայից այցելել է Բրիտանական թանգարանի վերոնշյալ ցուցահանդեսի հայկական տաղավար:

Ծրագրի արդյունքում ձեռք բերված գիտելիքները, գրականությունը և կապերն ակտիվորեն ներդրվելու են բուհի կրթական և մասնագիտական գործունեության ոլորտում: Ձեռք բերված հաջողությունները, հետագա համագործակցությունը երկրում թանգարանային կադրեր պատրաստող միակ բուհի՝ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի վերջին տարիների ծավալած միջազգային ակտիվ գործունեության շրջանակներում է և նպաստելու է թանգարանային ոլորտում մրցունակ կադրերի պատրաստմանը:

Միջազգային փառատոնում

Վերջերս Ռուսաստանի Դաշնության Կազանի համալսարանի Ելաբուգայի ինստիտուտի կողմից անցկացվեց դպրոցների ուսուցիչների հերթական 6-րդ միջազգային փառատոնը, որին մասնակցելու հրավեր էր ստացել նաև Մանկավարժական համալսարանը: ՀՊՄՀ-ի Հենակետային վարժարանի պատմության և հասարակագիտության ուսուցչուհի Մարինա Վենգրժանովիչը միջազգային փառատոնի շրջանակներում անցկացրեց վարպետության դաս՝ «Հայոց պատմություն» և «Հասարակագիտություն» առարկաների ինտեգրված դաս–դատավարություն՝ նվիրված Մեծ եղեռնի 100-ամյա տարելիցին: Ինտեգրված դասերի դիդակտիկ նյութերի առանձնահատկությունների վերաբերյալ վարպետության դասն արժանացավ ներկաների ուշադրությանը, հնչեցին հարցեր նաև հայաստանյան կրթական ոլորտի վերաբերյալ:

«Նման փառատոնները շատ արդյունավետ են, նպաստում են ուսուցիչների փորձի փոխանակմանը և նոր հորիզոններ բացում երիտասարդության կրթության և դաստիարակության պատասխանատու գործընթացներում»,- նշեց Մարինա Վենգրժանովիչն ու հավելեց, որ շուրջ 250 մասնակից ունեցող փառատոնը կազմակերպված էր բարձր մակարդակով. այդ շրջանակներում Ռուսաստանի Դաշնության, Լատվիայի, Շվեյցարիայի, ԱՄՆ-ի, Իսրայելի բուհերի առաջավոր մասնագետներն անցկացրին բազմաբովանդակ դասախոսություններ, քննարկումներ վարպետության դասեր, բանավեճեր:

Ի դեպ, կազմակերպիչների կողմից հատուկ շնորհակալագիր տրվեց ՀՊՄՀ ռեկտոր Ռուբեն Միրզախանյանին՝ ակնկալելով և կարևորելով հետագա համագործակցությունը, իսկ Մարինա Վենգրժանովիչին՝ հավաստագիր՝ հաջողված վարպետության դաս կազմակերպելու համար:

Մանկավարժական համալսարանի նախկին դասախոս, պատմության և իրավագիտության ֆակուլտետի հայոց պատմության ամբիոնի պատվավոր անդամ Աշոտ Առաքելյանը երկար տարիներ ապրում է Մորավիայում (Չեխիա), որտեղ զբաղվում է հայագիտությամբ, ղարաբաղյան և իսլամի հարցերով: Տարբեր հրապարակումներով նա բազմիցս հանդես է եկել նաև մեր թերթում: Այս անգամ ձեզ ենք ներկայացնում Աշոտ Առաքելյանի՝ Չեխիայի «Դեննիկ» օրաթերթում և Մորավիայի «ԺԻՎՈՏ» (ԿՅԱՆՔ) ամսագրին տված հարցազրույցի թարգմանությունը:

Եվրոպացիներ. ձեզ սպասվում է կորած քաղաքակրթության ճակատագիրը

Պավել Բոհուն
«Դեննիկ» թերթի գլխ. խմբագիր

Մերձավոր Արևելքում իսլամական պետության կողմից տեղի ունեցող իրադարձությունները ստիպեցին ինձ լուսաբանել և ընթերցողներին ներկայացնել՝ ինչ վտանգ է սպառնում մեր եվրոպական քաղաքակրթությանը, և որի համար դիմեցի ծնունդով՝ Ղարաբաղից, ազգությամբ՝ հայ մի անձնավորության, ով 25 տարի է, ինչ բնակվում է մեզ մոտ՝ Մորավիայում:

Աշոտ Առաքելյան՝ պատմաբան, նկարիչ, արվեստագետ, Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Հայոց պատմության ամբիոնի պատվավոր անդամ, Չեխիայի, Հայաստանի և Ղարաբաղի նկարիչների միության անդամ, անձնավորություն՝ օժտված ամուր բարոյական սկզբունքներով, համաշխարհային պատմությանը քաջատեղյակ պատմաբան, ով կարող է պարզաբանել մեզ՝ եվրոպացիներիս սպառնացող վտանգը:

-Հիշում եմ, քո արվեստանոցում երբեմն պատմում էիր անցյալի իրադարձությունների մասին: Երիտասարդ ժամանակ ունեցե՞լ ես կոնֆլիկտներ ադրբեջանցիների հետ:

-Պետք է իմանալ, որ Լեռնային Ղարաբաղը Ադրբեջանին է կցվել 1920 թվականին: Խորհրդային տարիներին, երբ բնակչության 82-84 տոկոսը հայեր էին, 100-ից ավելի եկեղեցիներից չէր գործում ոչ մեկը, դպրոցներում արգելված էր «Հայ ժողովրդի պատմություն» առարկայի դասավանդումը, հեռուստատեսային և ռադիոհաղորդումները տրվում էին հայերեն՝ շաբաթական 2 անգամ, մեկական ժամով: Խորհրդային տարիներին գոյություն ուներ ժողովուրդների «եղբայրական» բարեկամություն, և ազգամիջյան դեպքեր հազվադեպ էին լինում:

-Անցյալ դարի 90-ական թվականներին բռնկվեց պատերազմ Ադրբեջանի դեմ՝ Լեռնային Ղարաբաղի համար: Հայերը հաղթեցին և բռնագրավեցին 4400 քառակուսի կմ տարածություն:

-Հայերը Լեռնային Ղարաբաղը չեն բռնագրավել, այլ վերականգնել են պատմական ճշմարտությունը: 1989-94 թթ. համազգային շարժումը վերածվեց բացահայտ պատերազմի: Ողջ հայ ժողովուրդը ոտքի ելավ, անգամ սփյուռքից հարյուրավոր հայ երիտասարդներ եկան օգնության: Հայերը տվեցին 5500, ադրբեջանցիները՝ 32-35.000 զոհ: Հայերի դեմ կռվել են նաև ադրբեջանցիներին օգնության եկած 1500 մոջախեդներ աշխարհի տարբեր վայրերից և Շամիլ Բասաևը՝ իր 300 մարտիկներով, որոնք խայտառակ պարտություն կրելով հետ են նահանջել:1954 թվականին ադրբեջանական բանակը, որն այդ ժամանակ ուներ ավելի քան 60000 զինվոր, ընդունում է իր պարտությունը:

-Գիտեմ քեզ որպես Եվրամիության միգրացիոն քաղաքականության մշտական քննադատի: Դու պնդում ես, որ իսլամական էթնիկը ամրապնդվելով մեզ մոտ՝ Եվրոպայում, աստիճանաբար վտանգելո՞ւ է քրիստոնեական օրենքների վրա հիմնված եվրոպական կուլտուրան: Այդ վտանգն իրո՞ք լուրջ է:

-Եվրամիության միգրացիոն քաղաքականությունը վտանգված է և այն չարդարացրեց իրեն: Եվ երբ մեղքը փնտրվում է այլուր, պետք է ընդունել, որ գլխավոր մեղքը Եվրամիությանն է՝ իր «արտասովոր» օրենքներով: Յուրաքանչյուր օտարերկրացի լավ գիտի, որ նույն արարքի համար իր երկրում ավելի խիստ կպատժվի, քան Եվրոպայում, այդ պատճառով էլ այստեղ իրեն ամեն ինչ թույլ է տալիս:

Ընթերցողների ուշադրությանը կցանկայի ներկայացնել հետևյալ վիճակագրությունը: 1960-ականներին Եվրոպայում բնակվում էր 4-6 միլիոն մուսուլման և 120 քաղաքացուց այդ ժամանակ մեկն էր իսլամ: Այժմ Եվրամիությունում բնակվում է 52 միլիոն մուսուլման, 10-15 միլիոնն էլ առանց կարգավիճակի: Դա նշանակում է 8 եվրոպացուց մեկն այժմ մուսուլման է:

2050-60 թթ. Եվրամիությունում բնակվելու է մոտ 100 միլիոն մուսուլման: 2500 թվականին, ըստ վիճակագրության, Եվրամիությունն ունենալու է մեկ միլիարդ բնակչություն, որից միայն 100-120 միլիոնն է լինելու քրիստոնյա՝ այսօրվա 550 միլիոնից: Իսկ եթե Թուրքիան անդամակցի Եվրամիությանը, դա նշանակում է՝ 4 քաղաքացուց մեկը կլինի *իսլամ:* Այժմ Բելգիայի, Հոլանդիայի և Բուլղարիայի բնակչության 25 տոկոսը, իսկ ծնվող երեխաների 50 տոկոսը մուսուլման է: Լյուքսեմբուրգի բնակչության 45-50 տոկոսը մուսուլման է: Իսկ եթե վերցնենք այն փաստը, որ ծննդաբերության տվյալներով Եվրոպայում յուրաքանչյուր կին միջին հաշվով 1.5 երեխա է ունենում, իսկ մուսուլման կանայք՝ 4-6 երեխա, պետք է պատկերացնել, որ մոտ ապագայում Եվրոպան կդառնա իսլամական երկիր: Էյֆելյան աշտարակի վրա ծածանվելու է մուսուլմանական դրոշը: 2500 թվականներին Եվրոպայում որպես քրիստոնեական երկրներ մնալու են միայն Լեհաստանը, Հունգարիան և Իտալիան: Իսկ եթե ծննդաբերությունը Չեխիայում մնա նույնը, ինչ այժմ է, 1 կնոջը՝ 1.35 երեխա, ըստ Չեխիայի վիճակագրության կենտրոնի՝ 2100 թվականին այսօրվա 10 միլիոնանոց Չեխիան ունենալու է 6-7 միլիոն բնակչություն, իսկ վերջին չեխը կամ չեխուհին կմահանա 2500 թվականներին:

1960 թվականին Չեխիայի բնակչության 15-17 տոկոսն էր թոշակառու, 2010 թվականին՝ 20-22 տոկոսը, 2050-2060 թվականներին՝ 24-26 տոկոսը:100-120 հազար չեխուհիներ ամուսնացած են օտարերկրացիների հետ, իսկ դա շատերի համար Եվրամիությունում քաղաքացի լինելու ամենակարճ ճանապարհն է: Ըստ վիճակագրության՝ Չեխիայի և Եվրամիության կանանց 18-35 տոկոսը ի վիճակի չէ երեխա ունենալ:

Ժամանակին Մ. Կադաֆին ասել է. «Իսլամն այժմ թրի պահանջ չունի, առանց այն էլ մի քանի տասնամյակ հետո Եվրոպան խաղաղ ձևով կդառնա մուսուլմանական»:

-Եվրոպայում երբեմն տեղի են ունենում տեռորիստական հարձակումներ, որը վախի զգացողություն է առաջացնում: Ինչի՞ պետք է քրիստոնյաները մտածեն, թե իսլամը վտանգ է ներկայացնում քրիստոնյաներիս համար, եթե իսլամի հետևորդների մեծ մասը պնդում է, որ այն խաղաղասիրական կրոն է:

-Երբ որևիցե մեկը նշում է խաղաղասիրական բառը, հասկանում եմ, որ նա Ղուրան չի կարդացել: «Աստվածաշունչը» թույլ է, այն կոտրում է մեր ներքին հպարտությունը, իսկ Ղուրանը մուսուլմանին ուժ է տալիս: Քրիստոնյաները նրանց համար անհավատներն են, և ոչ միայն անհավատներ, այլ մարդիկ, որոնք չունեն սրբություն և բարոյականություն: Իսլամը այլ կրոն չի ընդունում: Ղուրանում գրված է.«Դուք, որ հավատում եք, մի՛ ընդունեք հրեաներին և քրիստոնյաներին որպես բարեկամներ, ձեզանից ովքեր նրանց հետ բարեկամանան, Աստծո հավատը նրանց կտանի ոչ ճիշտ ուղղությամբ» (Ղուրան, GXII):

-Կարծում եք բավարա՞ր է եթե մուսուլմանները մեզ մոտ հարմարվեն մեր կուլտուրային, օրենքներին, թե՞ մենք կընդօրինակենք նրանց:

-Եվրամիության քաղաքական գործիչների ինտեգրացիոն քաղաքականությունը չարդարացրեց իրեն, այլ բումերանգի նման այն շրջվեց եվրոպացիների դեմ: Մուսուլմաններն ունեն այնպիսի ամուր օրենքներ, որ երբևիցե չեն հարմարվի ոչ մի այլ օրենքի: Ընդհակառակը, ամեն տարի 150-170 հազար քրիստոնյա իսլամ է ընդունում խառը ամուսնությունների պատճառով:

-Հրապարակախոս և գրող Բ. Կուրասը գրել է, որ այժմ «մենք պատերազմի մեջ ենք իսլամի դեմ և պետք է պաշտպանություն ու հստակ օրենքներ հրապարակել եկողների հանդեպ, միաժամանակ արգելել նրանց օրենքները մեզ մոտ(շարիա, ջիհատ)»: Ի՞նչ կարծիքի եք:

-Եվրամիությունը պետք է ընդունի հստակ օրենքներ բոլոր ներգաղթյալների համար: Նրանք իրենք են իրենց կամքով գալիս մեզ մոտ և պետք է ընդունեն մեր օրենքները՝ լեզու, դպրոց, քրիստոնեություն և այլն: Բայց իրականում նրանք բացում են իրենց դպրոցները, մզկիթները, ապա որոշակի ժամանակից հետո ամրապնդվելով անկախություն են պահանջում, ինչպես եղավ Հայաստանում, Բյուզանդիայում, Ալբանիայում, Կոսովոյում, Կիպրոսում: Ցավոք, սա դեռ վերջը չէ, այլ սկիզբը:

-Մուհամեդի ծաղրանկարի համար որոշ եվրոպացիներ հատուցեցին կյանքով: Չե՞ք կարծում, որ դա հետդարձ է դեպի մի քանի հարյուրամյակ:

-Ցավոք, այդ հարցը շատ եվրոպացիներ լավ չեն պատկերացնում, որի համար կյանքով են հատուցում: Դեմոկրատիա՝ չի նշանակում անարխիա, որ ով ինչ ցանկանա՝ գրի կամ ասի: *Դեմոկրատիա* բառը հին հունական բառ է, որ նշանակում է *դեմոս*-ժողովուրդ և *կրատոս*-սիրել, սիրում եմ: Դա նշանակում է, որ պետք է հարգել դիմացինին և չծաղրել նրա օրենքները: Ղուրանում գրված է. «Ով վիրավորի Մուհամեդին, նրան սպասվում է ցավալի պատիժ» (Ղուրան, CXI):

-Ժամանակին դու ասել ես, որ Հայաստանն աշխարհի միակ քրիստոնեական երկիրն է, որտեղ մուսուլման չի բնակվում, որ ղարաբաղյան պատերազմի ժամանակ բոլորին քշել եք: Ի՞նչ խորհուրդ կարող ես տալ մեր եվրոպական երկրներին: Կարո՞ղ են օրինակ վերցնել Հայաստանից:

-16-17-րդ դարերում իսպանացիները բոլոր արաբներին արտաքսեցին Իսպանիայից հետ՝ դեպի իրենց երկրները: 1984-94 թթ. ադրբեջանցիները Ադրբեջանից արտաքսել են 500 հազար հայերի, իսկ հայերը Հայաստանից՝ 350 հազար ադրբեջանցիների: Այժմ Հայաստանն աշխարհի միակ պետությունն է, ուր չի բնակվում ոչ մի մուսուլման:

Եվրոպացիներին սպասվում է ծանր վիճակ: Կամ Եվրոպան պետք է անի այն, ինչ արեցին Իսպանիան և Հայաստանը, կամ էլ պարտադրի նրանց՝ ընդունել եվրոպական մշակույթն ու քրիստոնեությունը: Այլապես կարծում եմ երրորդ համաշխարհային պատերազմը քրիստոնյաների և մուսուլմանների միջև կլինի առաջիկա 50 տարվա ընթացքում, և այն ավելի ահավոր կլինի, քան անցյալի պատերազմները:

Հակառակ դեպքում, մոտ ապագայում, Եվրոպան կդառնա մուսուլմանական, իսկ քրիստոնյաները կմնան պատմության մեջ որպես անհետացած քաղաքակրթություն: Ձեր հետագա սերունդները ամաչելու են ձեր փոխարեն: Դեռ ուշ չէ, մտածեք այդ մասին:

(Օգտագործված փաստերը վերցված են Չեխիայի, Եվրամիության և ՄԱԿ-ի վիճակագրական կենտրոնից):

Այսօր կրթության տեսաբանները, ինչպես նաև այդ ոլորտի բազմաթիվ պատասխանատուներ, առաջավոր գաղափարների տեր ուսուցիչներ գտնում են, որ աճող սերնդի մեջ բացակայում են ուշադրությունը, հոգատարությունը, ապրումակցումը շրջապատի նկատմամբ: Այս խնդրով մտահոգված է ողջ աշխարհը: Պատահական չէ, որ անընդհատ ներկայացվում են և քննարկվում հումանիստական կրթությանը և դաստիարակությանը վերաբերող հայեցակարգեր, մշակվում են և իրականացվում ծրագրեր: Ավելի ու ավելի են գիտակցվում անձնակողմնորոշված, աշակերտակենտրոն կրթադաստիարակչական գործընթացի առավելությունները և դրանց՝ կրթությունը հումանացնող հնարավորությունները: Արդի մանկավարժության մեջ պրակտիկորեն ապացուցված է, որ հումանիստական կողմնորոշմամբ կրթության հիմքում ընկած են համագործակցության, ուշադրության, հարգանքի, հանդուրժողականության, ապրումակցման, անկեղծության, պահանջկոտության և սիրո ինքնատիպ դրսևորումները:

Սակայն կյանքը մեզ հանգեցնում է այլ եզրակացության. գնալով շատանում է անմարդկայնությունը, անհանդուրժողականությունը, կեղծիքը, հարբեցողությունը, թմրամոլությունը, ընտանեկան բաժանությունները, մանկապղծությունն ու մարդկանց տարաբնույթ շահագործումը: Նշանակում է՝ «Ինչ-որ տեղ ինչ-որ բան այնպես չէ...»:

Առանց հումանիստ ուսուցչի հնարավոր չէ իրականացնել հումանիստական կրթություն: Ուսուցչի հումանիստական գործունեության ուղղությունը կրթության էական բաղադրիչն է: Այս մոտեցումն ունի պատմական արմատներ:

ՋՈՒԼԻԵՏԱ ԳՅՈՒԼԱՄԻՐՅԱՆ

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀՈՒՄԱՆԱՑՈՒՄԸ՝ ՀՈՒՄԱՆԻՍՏ ՈՒՍՈՒՑՉԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴՐՎԱԿԱՆ

Հումանիստ մանկավարժները, անկախ նրանց հայեցակարգային սկզբունքների զանազանությունից, դաստիարակչական գործընթացի (թե՛ դպրոցում, թեև ընտանիքում, թե՛ հասարակության մեջ և թե՛ պետության քաղաքականության մեջ) կենտրոնում դնում են երեխային, նրա անձն ու շահերը՝ կարևորելով նրա ինքնահիրացումն ու ինքնազարգացումը: Ըստ գերմանացի մանկավարժ Ֆ. Ֆրեբելի՝ հումանիստական դաստիարակության էությունը սերն է երեխայի նկատմամբ, նրան նվիրած ժամանակը և դաստիարակողի անձնական օրինակը. «Ոչինչ ավելի»,- ամփոփում է հումանիստ մանկավարժը:

Հումանիստական կրթադաստիարակչական գործունեություն ծավալելու համար, բնականաբար, ենթադրվում է, որ մանկավարժական կրթության ողջ գործընթացը՝ կրթական միջավայրը, կրթության բովանդակությունն ու մեթոդները, կազմակերպման ձևերն ու սկզբունքները, պիտի ունենան հումանիստական ուղղվածություն:

Այսօր Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ-ում իրականացվող բարձրագույն մանկավարժական կրթության ողջ համակարգը ուսումնական գործընթացի բոլոր մակարդակներում կրում է հումանիստական և հոգեբանամանկավարժական ուղղվածություն: Այն դրսևորվում է ոչ միայն բուն ուսումնական գործընթացում, այլև առանձին ուղղություններով իրականացվող սեմինարներով, ուսումնական հետազոտական կենտրոնների ստեղծմամբ, ուսանողական գիտական ընկերությունների թեմատիկ դասընթացներով և այլն:

Ուսումնական պլանների, առարկայական ծրագրերի, նկարագրերի վերակառուցումը միտում ունի նպաստելու համալսարանում իրականացվող աշխատանքի բովանդակության, ձևերի և մեթոդների մանկավարժահոգեբանական ուղղվածությանը, արդիական մեթոդիկաների և հոգեթերապևտիկ այնպիսի դասընթացների ու գործնական աշխատանքների ներդրմանը, որոնք նպաստում են անձի սատարմանը: Դրանք նպաստում են նաև միջանձնային հարաբերությունների, բարեկիրթ վարքի, ուսուցանողի և ուսուցանողի հարաբերությունների, լեզվի և կանոնների տիրապետմանը, ձևավորում են ապագա մասնագիտության մեջ ծագող հիմնախնդիրների նկատմամբ առավել խորը ըմբռնում և զգայուն վերաբերմունք, նպաստում են ընդլայնելու մասնագիտական հետաքրքրություններն ու շփումները:

Մանկավարժական կրթության հումանացման արդի միտումներն առաջին հերթին պայմանավորված են կրթության գերնպատակը հանդիսացող մանկավարժական իդեալների՝ դեպի նոր՝ 21-րդ դարի մարդու ձևավորման ուղղվածությամբ: Այն առաջին հերթին անձի ինքնավստահության, ինքնագնահատականի կարևորումն է, բարձր ինքնագիտակցության ձևավորումը, նրա ինքնակայացման և ինքնազարգացման համար բարենպաստ միջավայրի ստեղծումը:

Կրթության հումանացման, ուսուցչին կախյալ վիճակից «ազատագրման» գաղափարներում կարևորվում է անձի՝ հասարակության կողմից ճնշման ազատագրումն ապահովող միջոցներով զինված ուսուցչի պատրաստումը: Գերմանացի մանկավարժ Ռոջերսի «Հումանիստ ուսուցիչ» տեսությունը դիտարկվում է որպես ինքնահիրացման, բարդ, հակասական և սեփական «Ես»ը բացահայտող ու խորը ինքնաճանաչմանն ու ինքնագնահատմանը միտված բազմաբաղադրիչ գործընթաց: Միայն այդպիսի ուսուցիչը կկարողանա ազատագրվել «վերևից» թելադրվող, ընդունված և տարիների ընթացքում «քարացած» կախյալ վիճակից և օգնել իր սաներին լինել ազատ, ինքնուրույն և բացահայտել իր ակունքները, իր էությունը, իր սկիզբն ու ընթացքը, առավելագույնս կայանալ ոչ թե ուրիշների, այլ ինքն իր հետ մղած պայքարում:

Խորհրդային կարգերի կրթության գործընթացի գերխնդիրը սովորողներին գիտական գիտելիքներով զինելն էր: Հասարակարգի վերջին տարիներին՝ մասնավորապես նրա փլուզումից հետո, կրթության ոլորտի կազմակերպիչները, պատասխանատուները, ինչու չէ՝ նաև ողջ հասարակությունը համոզվեց, որ միայն մարդու ինտելեկտը, մտավոր կարողությունները բավարար չեն լուծելու համար նրա առջև ծագած բազմաթիվ խնդիրները, գտնելու նրան ոչ միայն ճիշտ ապրելու կանոններով, ոչ միայն ի շահ հայրենիքի, ժողովրդի, այլև ի բարօրություն իրեն: Այսպես ապրելու համար մարդը պիտի ապրի հումանիստական հասարակության մեջ: Հասարակության հումանացում հնարավոր չէ իրականացնել միայն բանիմաց, խելացի, բարձր մտածական կարողություններ ունեցող մարդկանց միջոցով, անհրաժեշտ են զգայուն, ապրումակցող, ազատ գործունեություն ծավալող և այդ գործընթացում հանդուրժողականության և համագործակցության որակներ դրսևորող, զարգացած զգացմունքային ոլորտներին տիրապետող մարդիկ: Այս հիմնախնդրով այսօր, բնականաբար, մտահոգություններ ունեցող և դրանց լուծման ուղղությամբ գործունեություն ծավալող հաստատություններ և անհատներ շատ կան. մշակվում են և գործադրվում արդիական ծրագրեր, ճկուն, աշակերտների շահերը հաշվի առնող դասացուցակներ, ընտրվում են հատուկ առարկաներ, ուսուցման տարաբնույթ անհատականացման ձևեր, ստեղծվում են ինքնատիպ դպրոցներ, դասարաններ: Սակայն կյանքը մեզ հանգեցնում է այլ եզրակացության. գնալով շատանում է անմարդկայնությունը, անհանդուրժողականությունը, կեղծիքը, հարբեցողությունը, թմրամոլությունը, ընտանեկան բաժանությունները, մանկապղծությունն ու մարդկանց տարաբնույթ շահագործումը: Նշանակում է՝ «Ինչ-որ տեղ ինչ-որ բան այնպես չէ...»:

Մեր կարծիքով, բանն այն է, որ թե՛ հանրակրթության, թե՛ բարձրագույն կրթության ոլորտներում իրականացվող, այսպես կոչված, բարեփոխումները հիմնականում առնչվում են միայն կրթության կառուցվածքին և բովանդակությանը՝ առանց կարևորելու բուն ուսումնական գործընթացի երկու կողմերի՝ սովորողի և սովորեցնողի փոխազդեցությունը, համագործակցությունը, նրանց հարաբերությունների, ինչպես նաև երկխոսությունների բնույթը: Հենց այս՝ ուսուցիչ-աշակերտ համագործակցության, հաղորդակցման գործընթացում է, որ պիտի տեղի ունենա վերակառուցում. կրթության նպատակների, բովանդակության և կառուցվածքի ոլորտներում ցանկացած տեսլականի ներդրման հնարավորությունը, առավել ևս՝ արդյունավետությունը պայմանավորված են սովորող-սովորեցնող հարաբերությունների բնույթով և առանձնահատկություններով: Առանց հումանիստ ուսուցչի հնարավոր չէ իրականացնել հումանիստական կրթություն: Ուսուցչի հումանիստական գործունեության ուղղությունը կրթության էական բաղադրիչն է: Այս մոտեցումն ունի պատմական արմատներ:

Օրինակ, դեռևս հայ մանկավարժության այգաբացին սերնդի կրթությամբ մտահոգվող ազգային գործիչները կարևորել են ուսուցչի անձը, նրա կենսական արժեքները, նրա վարած կյանքն ու անձնային սկզբունքները: Օրինակ, Թումանյանը գտնում էր, որ ուսուցչի պատրաստման գործընթացը պիտի այնպես կազմակերպվի, որ նա առաջին հերթին դառնա դաստիարակ, ընկեր, համախոհ, հետո նոր՝ ուսուցիչ, դա-սա-տու, ով սովորեցնելուց ու դաստիարակելուց առաջ իր սաներին վերաբերվի սիրով և ըմբռնումով:

Աշակերտին հասկանալու համար ուսուցիչն իրեն պիտի դնի նրա տեղը և նրան շրջապատող աշխարհը, այնտեղ կատարվող դեպքերն ու երևույթներն ընկալի աշակերտի տեսանկյունով, շահերով, զգացմունքներով, ապրումներով, նրանց էությունը խորապես զգալով: Այդ դեպքում ցանկացած իրադրության մեջ ուսուցիչն աշակերտին կհասկանա, նրա համար կդառնա նմուշօրինակ, առաջատար հեղինակություն: Այս հանգամանքը ուսուցչին նոր պահանջ է ներկայացնում: Այն առաջին հերթին վերաբերում է նրա անձնային որակներին, վարքին, անգամ նրա գրավչությանը՝ հմայքին:

Այսպիսի ուսուցիչ պատրաստելու համար, բացի մասնագիտական նեղ առարկայական կրթությունից, կարևոր է ընդհանուր մանկավարժահոգեբանական խորը և բազմակողմանի պատրաստություն, ընդհուպ մինչև հատուկ՝ մարդու ծագման, մարդկային իմաստության ձևավորման ուղիներին նվիրված հատուկ ուսումնական դասընթացներ, ընտրովի սեմինարներ:

Հումանիստ ուսուցչի կերպարի ձևավորման և ամբողջացման, նրան արդյունավետ մանկավարժական, անձնակողմնորոշված գործիքներով զինելու խնդրի լուծումը միտված է ինքնադրսևորման, ինքնահիրացման, ինքնավերլուծության, ինքնակրթության, ինքնագնահատման պատրաստ անձնավորության դաստիարակությանը: Ուսուցչի պրոֆեսիոնալ պատրաստության գործընթացի առաջատար դիրքորոշումը մենք տեսնում ենք հենց այս համատեքստում, որի ծիրում մենք կարևորում ենք մանկավարժական կրթության ընթացքում ապագա ուսուցչի՝ փոքրիկ մարդու մեջ եղածը, ի ծնե ունեցածը, նրա իսկական «Ես»-ը բացահայտելուն նպաստող, այդ ճանապարհին փոքրիկին օգնող որակների, ցանկությունների, շարժառիթների ձևավորումն ու զարգացումը: Այստեղից հետևում է, որ մանկավարժական կրթության նպատակներն ու բովանդակությունը պիտի կառուցվեն ապագա ուսուցչի անձնային որակների և պրոֆեսիոնալ ունակությունների միասնության վրա, այն համոզմունքով, որ արդյունավետ կրթություն հնարավոր է իրականացնել միայն ուսուցիչ-աշակերտ անձնական հումանիստական փոխհարաբերությունների դեպքում:

Հիմք ընդունելով ուսուցիչներին ներկայացվող արդի պահանջները, որոնք պայմանավորված են կրթության հումանացման գաղափարներով և, բնականաբար, առաջին հերթին միտված են հումանիստ ուսուցչի պատրաստմանը, մանկավարժական բուհն ապրում է վերակառուցման, զարգացման կարևոր շրջադարձ՝ դեպի ուսանողը, դեպի նրա անձը, դեպի նրա այն կարիքները, որոնց բավարարման մակարդակով և այդ գործընթացի արդյունավետությամբ էլ պայմանավորված է հումանիստ մարդու ձևավորումն ու զարգացումը:

ՀՊՄՀ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳ

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Գիտահետազոտական կենտրոնը հրատարակել է մանկավարժական տեսության եզակի փաստաթուղթ՝ «Մանկավարժական կրթության զարգացման հայեցակարգ»: Հայեցակարգը մշակող խմբի ղեկավարն է մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՊՄՀ օտար լեզուների դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ Մելանյա Աստվածատրյանը, իսկ մշակմանը մասնակցել են փիլիսոփայական գիտությունների թեկնածու, ՀՊՄՀ կրթական բարեփոխումների և որակի վարչության պետ Մկրտիչ Ավագյանը, «Մխիթար Սեբաստացի» համալիրի ներկայացուցիչ Գայանե Թերզյանը և ծրագրի փորձագետ, ՀՀ ԿԳՆ «Կրթական ծրագրերի կենտրոն» ՕԻԳ-ի՝ ուսուցիչների մասնագիտական զարգացման ենթածրագրի ղեկավար Կարեն Մելքոնյանը:

Մանկավարժական կրթության զարգացման հայեցակարգը ուղղված է մանկավարժական կրթության արդի վիճակի բարելավմանը և նրա առաջանցիկ զարգացման ապահովմանը: Այդ մասին են վկայում 4 բաժինները, որոնք կոչված են վերոնշյալ խնդիրների լուծմանը: Բարձրագույն մանկավարժական կրթական համակարգի զարգացման միտումները, մանկավարժական կրթության համակարգի առկա վիճակը և հիմնախնդիրները, մանկավարժական կրթության արդիականացման հիմնական ուղղությունները, մանկավարժական կրթության բարեփոխման առաջարկությունները և հեռանկարային զարգացումները բաժինների ներքո առավել ընդգրկուն ու համակողմանի վերլուծության են ենթարկում մանկավարժական կրթության զարգացման ռազմավարական քայլերը, մարտահրավերներն ու միտումները:

ԹԱՆԳԱՐԱՆԱՅԻՆ ՇՐՋԱՅՑ

Կրթության Հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետում մեկնարկեց «Թանգարանային շրջայց» ծրագիրը: Ֆակուլտետի առաջին կուրսի ուսանողներն այցելեցին Հայկական պետական մանկավարժական համալսարանի թանգարան, որը հիմնադրվել է համալսարանի 90-ամյա հոբելյանի կապակցությամբ: Թանգարանի տնօրեն Ա. Գրիգորյանը շնորհավորեց առաջին կուրսեցիներին նոր ուսումնական տարվա կապակցությամբ, նրանց մաղթելով լինել արժանի ուսանողներ և իրենց վաստակն ունենալ հետագա սերունդը կրթելու գործում: Այնուհետև բարձր կուրսերի ուսանողները, որպես էքսկուրսավարներ ծանոթացրեցին համալսարանի պատմությանը, Հայրենական և Արցախյան պատերազմներում Հայկական պետական մանկավարժական համալսարանի մասնակցությանն ու երկրի կայացման մեջ նրա դերակատարմանը: Ամբողջ ընթացքում ուսանողներին ուղեկցեցին Անժելա Գաբրիելյանը և Գայանե Նազարյանը:

Էքսկուսիայի ավարտին ուսանողները իրենց տպավորությունները գրեցին հուշամատյանում:

Մանկավարժական համալսարանը հյուրընկալել էր բուհի նախկին՝ պատմալեզվաբանական ֆակուլտետի 1963-1964 ուսումնական տարվա շրջանավարտներին: Հյուրերը շրջեցին բուհի թանգարանում և ներկա ուսանողներին հենց իրենք պատմեցին բուհի պատմությունն ու հետաքրքիր և զավեշտալի դեպքեր իրենց ուսանողական տարիներից: Կես դար անց, կրկին հավաքվելով հարազատ բուհում, շրջանավարտները,

Կես դար անց՝ կրկին Մանկավարժական համալսարանում

մեկը մյուսին հերթ չտալով, մեծ ոգևորվածությամբ վերհիշում և պատմում էին իրենց ուսանողական տարիներից հիշարժան դրվագներ:

Շրջանավարտ, լրագրող Արթուր Նավասարդյանն իրեն համարում է այն եզակի երջանիկներից, ում բախտ է վիճակվել ուսանել հենց Մանկավարժական համալսարանում: «Երջանիկ ենք, քանզի մեզ դասավանդել են մեծ գիտնականներ և անփոխարինելի դասախոսներ: Հենց այդ միջավայրում էլ մենք սնվել, կրթվել, դաստիարակվել ու դարձել ենք իսկական մանկավարժներ: Այս համալսարանական միջավայրը դաստիարակել է շատ հայտնի մարդկանց՝ Հրանտ Մաթևոսյան, Ռազմիկ Դավոյան, Արամայիս Սահակյան, Կառլեն Հակոբյան և այլն: Շատ ոլորտներում ու բնագավառներում եմ աշխատել, սակայն նախևառաջ եղել ու մնացել եմ մանկավարժ: «Ինչ գործունեությամբ էլ, որ զբաղվել եմ, երբեք չեմ կտրվել մանկավարժությունից»,- ասաց Արթուր Նավասարդյանը և վստահեցրեց, որ երբեք չի մոռանա իր հարազատ բուհն ու հրաշալի ուսուցիչներին:

Մանկավարժական համալսարանում բազում տարիներ դասավանդած մանկավարժ, պրոֆեսոր Գրավիկ Բաբայանը հուզված վերհիշում է՝ հենց այս պատերի ներսում է եղել այն հանրակացարանային սենյակը, որտեղ բոլորով բնակվել են: «Այս բուհն մեզ համար տունն է եղել. այստեղ մենք ապրել, սովորել ու կրթվել ենք: Ինձ համար այն տունուտեղ ու աղուհաց էլ. իմ ընտանիքի բոլոր անդամներն այստեղ են սովորել, որոշներն էլ աշխատել»,- նշեց Գրավիկ Բաբայանը և ներկա ուսանողներին հորդորեց՝ հետաքրքիր ու հիշարժան անցկացնել ուսանողական տարիները, փայփայել անգին այդ հարստությունը, քանզի դրանք իրենց կենսագրության ամենավառ ժամանակահատվածն է:

Մանկավարժ Էմմա Հակոբյանն ևս ամեն անգամ բուհ ոտք է դնում նոր ու հետաքրքիր զգացողություններով: «Հաճախ եմ այցելում հարազատ բուհը և ամեն անգամ ուրախությամբ ականատես եմ լինում նոր առաջընթացների: Բուհն այսօր հագեցած է նոր տեխնոլոգիաներով, իսկ ուսանողներին ընձեռված է ուսանելու լավագույն հնարավորությունները, պարզապես պետք է նրանք մի փոքր էլ ավելի մեծ ոգևորվածություն դրսևորեն»:

Թանգարանի տնօրեն Ալվարդ Գրիգորյանը նշեց, որ ՀՊՄՀ թանգարանը մշտապես հանդես է գալիս ամենատարբեր նախաձեռնություններով. բուհի պատմությանը, գործառույթներին ծանոթացնելը, դրանք հանրահռչակելուց զատ, թանգարանը մշտապես կապ է ստեղծում շրջանավարտների հետ, ովքեր հաճախ գալիս են և համալսարանի պահոցն ու ֆոնդերը հարստացնում նոր ու կենդանի նյութերով:

Ցերեկույթի ընթացքում կուրսընկերը հիշեցին նաև իրենց շարքից բացականերին, իսկ լրագրող Արթուր Նավասարդյանը ներկայացրեց բանաստեղծ Ռազմիկ Դավոյանի բանաստեղծություններից մեկը, որի ռուսերեն տարբերակի առաջին թարգմանիչը ուսանողական տարիներին հենց ինքն եղել է:

Հյուրերը հեռացան վառ հիշողություններով՝ խոստանալով շարունակել հաճախակի այցերը իրենց հարազատ բուհ:

Սոնա ԱՐԱՄՅԱՆ

ՏԱՌԵՐԸ ԿՊՐԾՆԵՆ

Շատ-շատ տարիներ առաջ, երբ ես դեռ նոր էի դարձել տառաճանաչ, հյուր էի գնացել գյուղ՝ տատիկիս, պապիկիս, մորեղբորս և նրա փոքրահասակ երեխաներին տեսնելու: Այցելություններիս օրերը կախված էին մայրիկի աշխատանքից, և այդ օրերը՝ ուրախությամբ լեցուն, տոնի էին վերածվում ինձ համար:

Գյուղն ինձ համար առեղծվածային էր բոլոր առումներով: Երազանքով, հեքիաթներով լի այդ օրերն այսօր առավել ջերմ ու կարոտով եմ մտաբերում: Ինչե՞ր չէի տա՝ գեթ մի օրով այդ ամենը ետ բերելու: Աստվա՛ծ իմ, որքա՜ն անհոգ, որքա՜ն ուրախ էին անցնում այդ անմոռանալի օրերը, ժամերը, վայրկյանները: Սիրտս կծկվում է՝ վերհիշելով մանկության իմ հրաշք պահերը: Իսկ դրանք չեն բացատրվում, ինչպես երբևէ չեն բացատրվում արևը, սերը և կամ երեխան:

Ինչպես միշտ, այդ օրն էլ բոլորի հետ հանդիպումս անչափ ջերմ էր. կարոտել էինք իրար: Մենք, միմյանց ընդհատելով, հարցեր, հարցեր, անթիվ հարցեր էինք ուղղում: Երբեմն նույնիսկ այնպես էր պատահում, որ խոսում էինք՝ առանց իրար լսելու: Բայց դրանից մեր ջերմությունը չէր նվազում: Ահա այդ պահին էր, որ քաղաքից վերադարձավ քեռիս՝ ձեռքին մի կապոց: Նա խորհրդավոր նայեց բոլորիս և հանդիսավոր հայտարարեց, որ գրքեր է գնել Անուշավանի՝ իր ավագ որդու համար:

Տեսնել էր պետք, թե դա ինչ ուրախություն պատճառեց բոլորին: Անուշիկը՝ իբրև ավագ քույրիկ, շատ մեծավարի հայտարարեց, որ ճիշտ է, գրքերը «ապերիկինն են», բայց ուզում են, որ ես կարդամ, իրենք լսեն:

Բնականաբար, ես էլ՝ որպես ավագ քույրիկ, հանձն առա այդ պատվաբեր և պատասխանատու գործը. վերցրի գրքերը, նախ սկսեցի ուշադիր թերթել, ապա ընտրեցի դրանցից ամենապատկերազարդը, լավ տեղավորվեցի թախտին, որ դրված էր պատշգամբում, և սկսեցի կարդալ: Սկզբում բոլորը համակ ուշադրությամբ ունկնդրում էին. լսելի էր նրանց շնչառությունը: Դա ինձ շատ ոգևորեց, և ես շարունակեցի կարդալ՝ փորձելով ընդօրինակել իմ մայրենիի ուսուցչուհուն՝ ընկեր Մինասյանին:

Բայց հանկարծ Անուշավանը սկսեց բարձրաձայն հեկեկա լև հեկեկոցի միջից.

- Մի՛ կարդա, մի՛ կարդա...

- Բայց ինչո՞ւ, լավ չե՞մ կարդում,-հարցրի ես զարմացած:

- Չէ՛, լավ ես կարդում, բայց էլ մի՛ կարդա, տառերը կպրծնեն, բա ես հետո ի՞նչ պիտի կարդամ,- պատճառաբանեց փոքրիկ Անուշավանը:

Ես և Անուշիկը ծիծաղից սկսեցինք գլորվել թախտին: Իսկ այդ պահին փոքրիկը արագ-արագ հավաքեց գրքերը և փակվեց իր ննջարանում:

Երբ մենք ներս մտանք, նա արդեն թաքցրել էր իր՝ «պրծնող» տառերով գրքերը և հանգիստ շունչ էր քաշում:

Հետո մեզ միացան մորեղբայրս, նրա կինը, և բոլորս փորձեցինք համոզել, որ տառերը չեն կարող «պրծնել»: Փոքրիկ, միամիտ այդ էակին, սակայն, այդ օրն այդպես էլ չհաջողվեց հակառակը համոզել:

Այդպիսին են փոքրիկները, անվերծանելի, անբացատրելի...

Վարդիթեր ՍԻՄՈՆՅԱՆ
Մայրենիի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դասախոս, մգթ

Գլխավոր խմբագիր՝ Սիլվա ԱՍՐՅԱՆ
էջադրումը՝ Պետրոս ՎԱՐԴԱՆՅԱՆԻ
Համարի պատասխանատու՝ Սիլվա ԱՍՐՅԱՆ

Գրանցման վկայական՝ 01Մ00184 տրված է 26.03.2008 թ.
Հասցեն՝ Տիգրան Մեծի 17, հեռ. 59-70-97:
էլ. փոստ՝ asryansilva@gmail.com
Տպագրված է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպագրատանը:
Հասցեն՝ Արշակունյաց 2
Տպաքանակը՝ 1800 օրինակ: Ծավալը՝ 2 տպ. մամուլ

Թերթի նյութերի արտատպումներն առանց խմբագրության համաձայնության արգելվում է:
Հղումը պարտադիր է:
Հանձնված է տպագրության 29.09.2015 թ.